դժոխքն ու դրահանը, հավիտե-
նական փրկությունն ու հավիտե-
նական կորուստը: Ի՞նչ անե-
նք՝ ունեցողության կանչել, ինչպե՞ս
դուրս գալ այս ծանր կացություն-
ից: Մի՞թե Աստված չի տեսնում
այս ամենը, ինչո՞ւ է անողադար
մեզ փորձում, մեզ հալածում, ին-
չո՞ւ է ստեղծել մեզ... Սրանք մարդ-
ու միտքն զբաղեցնող կարևոր
նազույցի հարցերն են, որոնք շատ
հաճախ մնում են անպատաս-
խատ: Մի՞թե այս հարցերն իրենց
պարտախիանները չունեն: Արդ-
յոք Աստծու խոսքը, որ Իր իսկ
վկայությամբ հավիտենական են
ու անընչելի, վարդապետ Ի վեր չի՞
պատասխանել մեր փրկման ու հո-
գին զբաղեցնող հարցերին, զգա-
ցունմերին: Անզգամ ու անհա-
վատ մարդը մեղավոր այս աշ-
խարհում հաճախ է մոռանում
«Աստծուն» ասելով, որ Աստված
չկա, կամ էլ մոռանում է Նրա
պատվիրակներն ու օրենքները,
որոնք արձանագրված են Տիրոջ
հայտնության գրքում՝ Աստվա-
ծաշունչ մատյանում, որը սնու-
ցում է մեր փրկման ու հոգին՝ դա-
ստաբանելով մարդուն ըրիտա-
նեակայելի են աստվածահաճո
կերպով: Ասկային մարդու սրտում
բույն դրած չարը չի թողնում, որ
մարդը ապրի այն կյանքով, որ իր

համար նախասահմանել և Աստված: Չարը մարդուն դրդում է փախկնափրկության, իսկ փափկասեր մարդու համար ըզբխաբուրթյունը դառնում է Աստծուց տրված «պատիժ», կյանքը դարձնում անպատանելի, մղում հուսահատության եւ վերածվելով անտանելի ապրելակերպի, կարող է հասցնել ընդհուպ ինքնասպանության: Ի՞նչ անել:

Երբ մարդը արարածը կորցնում է իր բուն ինքնությունն ու նախախնամությամբ ստանալով վաճառաբեկությունը, կյանքի ճշմարիտ իմաստը մոխրվում է. այն դառնում է խաղաղության եւ ժամանակավոր զվարճությունների ընթացք։ Փոխվում է նաեւ եղջանակային զգացումի իրական խորհուրդը։ Ինչպես ար Դովհան Ռեբեքիան եւ ատում, «Մարդիկ եղջանակ են համարվում նրան, ով ունի երթեւեկության շքեղ միջոցներ, գեղեցիկ կնի կամ ամուսին, հարստություն կամ բարություն։ Սակայն թեթ այս ամենը՝ արանից հեռացնելը, նա ամբողջովին դատարկ է միայնակ կմնալ»։ Իրական եղջանակությունը գալիս է մեկ արդյուրից՝ Աստուծուց։ Այս մեկ համոզմամբ արթնի միաբերան ատում է։ «Երջանակություն գտնելու համար նախ պետք է գտնելք Աստուծուն»։ Շատ աղեղամ տեսնում էլք ընտանիքներ, որոնք կարծես թե երջանակ են. ունեն խելացի ու երդեցիկ երեխաներ, ապահով աշխատանք։ Բայց օրերից մի օր հանկարծ տեսնում էլք, որ մի ընտանիքի պատճառից ամուսինները բաժանվում են, ընտանիքը քայ-



քայվում է, եւ երեխաների աչքերը լցվում են տխրությամբ: Ինչպէս առանց կրակի չկա ջերմություն, եւ առանց արեգակի՝ լույս, այնպէս եւ առանց Աստծու չկա երջանկություն:

Աստվածախնի մարդն իր ամբողջ կյանքն անցկացնում է պայքարի մեջ՝ մարտնչելով այն օբյեկտիվ եւ սուբյեկտիվ գործոնների, սեփական եւ այլոց անբարոկրեքի եւ ցանկությունների դեմ, որոնք խթաթարում են մարդկային աստվածաշնորհի կյանքին՝ ներդաշնակությունը։ Թեպետ, տիրապանող խոսքի համաձայն, այս պայքարն ավելի մեծ պետք է ընթանա հենց մեր անձի, մեր ներսում բնակաված արատների եւ վնասակար սովորույթների դեմ, սակայն դա չի նշանակում,

որ չպետք է պայքարեց մեր իրավունքները, ապրելու մեր կամքը ոտնհարող շատ ուժերի, որոնց թվում նաեւ վաշխառուների, խաբեքաւորների եւ կաշառակերների դեմ: Ակամայից ինչի էլ դառնում սք Մոկչես հորեմացու «Ողբը», որտեղ մենք Պատմա-հայրը ողբում է հայության բոլոր խավերի համար՝ քննադատելով եւ իշխանավորներին, եւ դատավորներին, եւ վաշխառուներին, եւ քահանայներին... Անցել են դարեր, բայց կարծես է դարում լինել: Հիրավի, շատ քան չի փոխվել մեր մեծանուն քերթող-հոր ժամանակները: Այո՛, տեխնոլոգիայաւես, սոցիալակաւես, մշակութային եւ այլ առումներով մարդկությունն առաջընթաց եապրում, բայց հոգեպես նոյն մե-

ղավորն է, «աշտարակաշինության» ժամանակների նույն ինքնաբավը՝ թերեւս ավելի քան ընկած:

Այսօր մարդու համար առաջ-
խաղացման, ինչու չէ, նաեւ փառ-
քի ու պատվի միակ միջոցը հա-
մարվում է փողը, որը ձեռք է բեր-
վում ե՛լ աղդար, ե՛լ հատկապէս
վաճառողւթյան, խաբէբալու-
թյան, կախարորութան եւ այլ սեւ
ու մուգ գործերի միջոցով:

Իհնէ և վաշխառութիւնը: Մի-
թէ այն չարիք չէ, մի-թէ այն մեզ
չի դարձնում նյութական աշխար-
հի գերի: Վաշխառութեան հետե-
ւանքով մարդը մտադրու, նույ-
նիսկ իր բարեկամին ու մերձա-
վորին զոյրում և ունեցեալքն,
դիրքից ու պատկից, տանում
նրան ընդհուպ կործանման:
Դրամաշրթոնութիւնը դարձել է
մարդկանց կյանքի իմաստը:
Մարդիկ չեն գիտակցում, թէ ում
են ծառայում՝ ընտանիքին, հայ-
րենիքին, թէ՛ դրամին, նյութին,
թէ՛ Ստոնուն:

Վաշխառությունը դեմ է Աստուծու պատվիրանին, քանի որ Աստված Մովսես մարգարեն Բերանով ասում է. «Զո եղբորը վաշխով արծաթ չտաս, որովհետեւ անօրինություն է Աստծո առջեւ» (Բ Օր. ԻԳ 19): Վաշխառությունը միթացել է այսօրվա մարդու միտքը, և ոչ մի քաղաքից և գյուղից «վաշխառություն» ունեցվածություն չկերպացան (Մովս. ԾՐ 12): Վաշխը, ինչպես (Գրում է Յո Զվիկան Մանդակունի հայրապետը, «մահվան որոգայթ» է ստացողների համար, ...խեղճող պարան է, հոգու կպայակը, գեհեւի առիթ, խավարի առաջնորդ է քողոր տեսակի տառաջանքներն ու հավիտենական ամրոք նախապատրաստող): Իսկ նա, ով իր «արծաթը» վաշխով էի տալիս, էի սասանել (Մովս. ԾՐ 5):

Շարունակությունը՝ էջ 8

**ՄՆՀԱՏԱԿԱԿՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՍՏԵԾԱԳՈՐԾԱԿԱՄՍ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ**

ՍԿԻՊԲԸ՝ էջ 4

Զարեհն ասպատե իրեն չէր դրսեւորի, այլ միայն երկիր, պետութիւն հասկացու-
թյան մէջ կփորձէր պատկերացնել Ստա-
լինի եւ Լրա դրածո Ամատուհու կերպար-
ները:

Սիւս արևով պստը է բացատրել նրա վերաբերմունքը. ոչ թե պաշտամունք, այլ առաջնորդի հանդեպ վերաբերմունք՝ որպէս երկրի գլխավոր խորհրդանշան: Անգամ այս պայմաններով երեքին ու արտաքին մարդը ճակատագրական բախման մեջ էին: ՉԱԹ-ում պահվող՝ Բակունցին նկիրված «Եպիգրաֆս (ուսարացի)» վերջին մաքուր էջին գրել է «Թուղթ» պոեմի վերնագիրը՝ «Թուղթ Իոսիփ Ստալինին (փառված անավարտ պոեմից) ընդունելյա համայն աշխարհում ժողովուրդների միակ առաջնորդ-բարեխմբին իմ հազարամյա ժողովրդին նրա ամենաբնիկ չարչարանաց փորձության պահին վերածնության առաջին համբավը ավետողին, Էսենլյան...», մյուս կողմից՝ «Ղոփինք նախրական» շարքի «Դասաւորթուն» տոնետի տակ նախորդակի լարված ձեռագրով էե ընդգծումներով ավելացրել. «Ток кончается А. Ханджян и начинается ислական восток» (Երկար էր այդ ճանապարհը, որի վերջին կայանը հասնում էր Իսլամական արևելքին): Սա ոչ թե երկվություն է, այլ հակադիր բեռնեւերի համատեղությունն անիթրականալի հոգեբանական փորձ, ինչը պիտի ամպուրեմ մտախոյզ պայթյուններ:

Չարքեղի գործարարն զարդեցիք է Վալենտին Պարսխաի «Հայկառաքել-
նություն» գոհ իսպանական և արդյունաբերական բանաստեղծներ» (Մ. - 1934, 1935)
նունով) գիրքը, ինչի տպագրությունը գուցարկում է Չարքեղի դեմ ար-
գելանքների ու հայաճանքների սատակացմանը: Իհարկե, հստակ տեսնու-
մ էր, որ նոր ժամանակների հավատաքննության առաջին գոտիքը մեկն ինքն
էր: Իհարկե, նա շատ լավ գիտեր, թե ովքեր էին դահեմայետ Ստալինը, հայա-
յանք Բերիան, ազգային կեղծարար կորցրած Ամատունին և սրանք բազմա-
թիվ կատարածությունները, ովքեր միասին նրա աչքին երևում էին միմյա-
ն ծաղրածուի տեսքով, բայց նաև նա շատ լավ գիտակցում էր, որ իր նման
բանաստեղծը՝ որպես հայոց նորոյա ոգու խորհրդանշան, սրանք շուրջկա-
ն մեջ է: Իրեն արժանի ձեռով փրկագնելու և որանավ իսկ հայոց ոգին փր-
կելու նպատակով նա նաեւ փորձեց հարթահարել իր ներքին աշխարհությունը,
ուսկ ապագայում արհեստագործական արտեւ ձեւով էր...

Շարունակելի

Շարունակելի

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր



ՀԱՅԻՑ ԿԱԹՈՒՄԻԱՆՈՍՆԵՐ

יחזקאל ו אבא (1738-1751)

Սկիզբը՝ էջ 3

Գամեևանով նախկին՝ խաղող հարաբերությունները վերականգնել՝ Շրջաբալյուրի հատուկ նամակ ուղարկեց անգամ Գրասխիյի թագավորին եւ վարչապետին, որը դեռ կարողնալ Ֆյոդրին եր, ինչպես նաեւ։ Գ. Պոլուսով Գրասխիյականին հայտնի։ Նամակները միայն վերջինի պատճենէն։ Ե պահպանվել՝ 1742 թվի հոկտեմբերի 26-ի թվագրումով։ Նամակները նկատելի օգուտ տվեցին, քանի որ լատիներին ոտնձգությունները դադարեցին։ Ինչ վերաբերում է Շոթապալին, ապա նա ընդարձակեց Սք Դակոյանսէ մայրավանհի ու տաճարի շինությունները։ Զորքանի դավանանքի երեք ուղղությունների համատես ջանքերով կա զգալի արաքացիների վայրագ ու հարստահարիչ բռնություններ Բեթղեմի շրջակայքում։ Շոթապալիքը, թեկուք է տառաջացած տարիք ունենալով է ամենից երկրան ապրելով ամրոցող աշակերտների մէջ, շարունակում էր որ ակտիվ գործունեությունը։ Դանկան մահից հետո նրա գծականներն էին Թեոդորոս փոխամորը, Գաբրիել աթոռակալը, Պողոս թարգմանը, Դովաանես գործակատարը, որոնք օրորոն է մարդասէսներն էին։

Արդ տեսնե՞ք, թե ի՛նչ կացություն էր տիրում Կիլիկիայի քաղաքում: Կիլիկիայում հայտաբերվել էր հարյուրից ավելի ձուլակաշի ճամփե՛ր՝ տե՛ր և՛ դամ կամ Տեր-Արամյան մականունով, որը 1272-ից հաջորդե՛ր էր Գրիգոր Կեսարացուն, որն էլ հայտնի էր Ուդուրլու մականունով: Ապփու՛մ է, որ նա ապրե՛ր է մինչե՛ր 1734 թվով, սակայն 1731-ից կաթողիկոս է հիշատակվում Ղուկաս Աջապա-
հյանը կամ Աջապախյանը, որը ոչ թե հակաթուր, այլ օրինավոր կաթողիկոս էր Սուտ: Խնդիրն էր, որ ձուլահանսեր կամավոր հեռացե՛ր էր Սիցիլիայից, որ Ղուկասը եղե՛ր է քաղաքակից, իսկ Ղուկասյանը, որ Ղուկասը չէր հաշտվում իր հայրենի հայրենիքի հետ:



կայն հայտնի չէ, թե դա ինչպես է արվել։ Եոկ մի հիշատակարան պատմում է այն մասին, որ Կիլիկիո կերքին կաթոնիկոսները երեքայլ շրջում էին տեղից տեղ՝ օտար բռնակալների հարուցած հայհաճանքների պատճառով։ Ըստ որում, բանն այնտեղ էր հասել, որ աթորի պահպանությունը մնացել էր ամուսնավոր քահանաների ձեռքին, թերեւս, ճիշտ է ասել՝ քահանայական մի սերնդի, որի ներկայացուցիչն էր Յուսիկ քահանա Սեփն, որը նույնիսկ Մշակապետ նոր Յուսիկ է մտահաշվել 1748 թվի հունվարին։ Սիւս այս տեր Յուսիկի որդին էր Ղուկասը, որին ձերբացած Յովհաննէսն առաջ քաշել ղովարին ու խառնել ժամանակներում։ Ղուկասը Սիւ Մշակապետյանների քնտանիքից էր, որը հռչակվեց Սիւ աթորին մեկ դարից ավելի տիրելու համար։ Սակայն ինչպիսին է այդ ունտանիքի ծագումը, հայտնի չէ։

Շարունակելի

ԲԱՐԵԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, պրոֆեսոր

Շարունակությունը՝ էջ

ԹՈՐՈՍ ԶՈՒՂԱՅՆՈՒ

Սկիզբը՝ թիվ 15-16

ԵՐԱՆՈՒՅՑ ՊԱՏԱՐԱԳ

Խնկարկությունն ավարտելով՝ քահանան վերադառնում է Սեդանի մոտ, եւ սարկավազը գոչելով՝ «Օրհնեա՛, Տէ՛ր», սկսւում է Պատարագի երկրորդ մասը, որը կոչվում է **Երախայից Պատարագ**, որը տեւում է մինչեւ «Տէր Աստուած օրհնեսց՛ գամենեւն» օրհնությունը: Բոլոր կարները մաղթանքների կամ աղոթքների վերջում քահանան օրհնում է ժողովրդին, ասելով՝ «**Խաղաղութիւն ամենեցուն**», եւ որպէսզի քահանան էլ այդ օրհնությունը մասնակից լինի՝ ժողովուրդը փոխարժարաբար պատասխանում է՝ «Եւ ընդ հոգւոյդ քննէ»:

Բուն Պատարագն սկսվում է «Օրհնեալ թագաւորութիւնն» (սբ Զակարի եւ սբ Ոսկեբերանի պատարագամատուցների մեջ միայն «**Միածին Որդի**»-ն է) փառաբանությամբ, որին հետեւում է ժամանուրդ: Զետագայում մեր հայրապետների տնօրինությամբ հաստատվել են նաեւ այլ՝ հավոր պատշաճի հավելյալ ժամանուրդներ:

Սրանից հետո քահանան աղոթում է ժողովրդի եւ եկեղեցու համար, որի ընթացքում դպիրները ճաշու սաղմոս եւ շարական են երգում: Ապա սարկավազի «**Պաշխումք**» (իուրաքանչեւ նշանակում է «**ուշադիր եղէք**») գոչելուց հետո երգվում է սրբերությունը կամ «**Սուրբ Աստուած**»-ը: Ժամանակին հույները եւ լատիներները անհամաձայնություն էին հայտնել մեզ՝ «**Սուրբ Աստուած**» շարականում «**խաչեցար**» ասելու համար: Ըստ նրանց՝ այդ երգն ուղղված է Ամենասուրբ Երրորդությանը, իսկ մենք ասում ենք, թէ Երրորդությունը խաչվեց: Այդ իսկ պատճառով մեզ վեճեր են խռովություններ եղան: Մեր

ընդհանրական աղոթքների մեջ «**Սուրբ Աստուած**»-ը միշտ ուղղված է եղել առ Երիստոսը եւ միշտ դասվել է Երիստոսին ուղղած աղոթքներին եւ ոչ թե՛ Երրորդությանը:

«**Սուրբ Աստուած**»-ից հետո սարկավազն աշխարհի եւ եկեղեցու համար քարոզ է կարգում եւ Աստծուց ողորմածություն հայցում: Իսկ քահանայի աղոթքից հետո Սբ Գրիգի հատվածներ են կարդում: Նախ՝ Զին Կտակարանից եւ ապա՝ Առաքելական թղթերից:

Մարգարեական եւ առաքելական ընթերցումներն ավարտելով՝ սարկավազը, **Օրթի** ազգարարելով, ժողովրդին հրավիրում է ուսնել կանգնել: «**Օրթի**» հունարեն բառ է, որ նշանակում է «ուղիղ կանգնել», այսինքն՝ «ոտքի ելել»: Ավետարանի ընթերցումը Պատարագի ամենակարեւոր մասերից մեկն է, դրա համար սարկավազն ազգարարում է. «**Երկուդաժութեամբ լուարուք**»՝ երկուդաժութեամբ լսել եւ հետո՝ «**Պրօսխումք**»: Այս երաշխի նախապատրաստության ավելի խորհրդավորություն տալու համար իսկկարկու սարկավազը բուրվառ ձեռքին իսկկարկում է Ավետարանի առջեւ, եւ ջահընկալները երկու մոմ են պահում նրա կողքին՝ խորհրդապէս հաստատելով, թէ Երիստոսը եւ Իր Ավետարանը աշխարհի Նույնն են: Սբ Զակարի եւ սբ Ոսկեբերանի Պատարագներին հանձնարարականն է, որպէսզի Ավետարանի ընթերցումից անմիջապէս հետո քարոզ խոսվի: Եվ իսկպաշտ այս պահին ամենախորմարն է, քանի որ օրվա քարոզը պետք է Ավետարանի՝ այդ օրվա ընթերցումի պատգամը որպէս ընթերցան ունենա: Սակայն այսօր շատ վայրերում քարոզը խոսվում է «**Զայր մեր**»՝ Տերունական աղոթքից առաջ:

Վերոհիշյալ Մայր Պատարագամատուցի մեջ (սբ Զակարի),

քարոզից հետո, ասվում է եւս մի քանի աղոթք, եւ երախայք արծակվում են (**Երախա** կամ **Երեխա** նրանք են, ովքեր դեռ ուսանում են քրիստոնեական ճշմարտությունները ու կանոնները եւ պատրաստվում են մկրտության): Մեզ գնում էլ ժամանակին «**Հաւատամք**»-ն ավանդվում էր միայն մկրտված քրիստոնյաներին, իսկ **Երախայք** իրավունք չունէին ունկնդիր լինելու: Բայց ժամանակի ընթացքում, երբ այլեւս չափահաս **Երախայք** չկային, եւ սակավ ինչ պակասեց նրանց թիվը, արդեն դա ավելորդ համարվեց, եւ «**Հաւատամքը**» գտնելվեց անմիջապէս Ավետարանի ընթերցանությունից հետո՝ իբրեւ վարդապետության խոստովանություն: «**Հաւատամքին**» հաջորդում են մի քանի աղոթքներ՝ աստվածապաշտության եւ շնորհներ խնդրելու համար, ապա **Երախայից Պատարագ** վերջանում է «**Օրհնեալ Տէր մեր Յիսուս Երիստոս**, Ամեն՝ մաղթանք, **օրհնեսց՛ գամենեւն**» ասելուց հետո **Երախայք** արծակվում է:

ՎԵՐԱԲԵՐՈՒՄ

Խորհրդաւոր կամ **հաւատագեղց** Պատարագն սկսվում է նշխարի եւ գինու ընծայումից: Այսինքն՝ նշխարով եւ գինով պատրաստված սկիին ընծայման սեղանից վերաբերվում եւ որվում է Պատարագի սուրբ Սեղանին: Զնում, վստահ լինելով, որ եկեղեցում երախա չկա, սարկավազն արտասանում էր. «**Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից եւ մի՛ ոք յապաշխարողաց եւ յանմաբոցի մերձեցի յստուածային խորհուրդս**»: Ս. Զակարի, ինչպէս նաեւ մեր ինի պատարագամատուցը, որ Լամբրինացու Մեկնության մեջ պահպանվել է, ավելի պարզ է ասում. «**Որ երա-**

խայից էր երբայք», եւ հետո՝ «**Մի ոք**» եւ այլն: Զնում երախաներից բացի՝ **ապաշխարողները, թերահաւատներն ու անմաբողներն** այս պահին դուրս էին գալիս բուն եկեղեցուց եւ սպասում գավթում: Սակայն այսօր այդ կարգը չի պահպանվում. մեր հայրերը թույլ տվեցին, որ **ապաշխարողները** մասն մինչեւ **ողջունի** պահը, երբ նրանք, ովքեր չէին կարող հաղորդվել, դուրս գալին եւ գավթում պահպանեին՝ **«առ դուռն ելէ եւ առթեցէք»** (Հայաստանյայց գրեթէ բոլոր եկեղեցիներում այս կարգն այսօր չի պահպանվում):

Վերը նշեցինք, որ Պատարագի խորհուրդն սկսվում է **վերաբերումով**, եւ պատարագի բուն քահանայագործության պաշտոնն էլ սկիզբ է առնում այդ պահից: Ուստի, եթէ պատարագիչը եպիսկոպոս է, ապա հանում է իր եպիսկոպոսական զգեստները, նշանները եւ մնում է լոկ քահանայական պարզ զգեստներով: Սաղավարտն ու հողաթափերն էլ հանում է՝ ի նշան խոնարհության եւ երկուդաժութեան: Այսպիսի նախապատրաստությունից հետո սուրբ ընծաները հանդիսավորապէս, իսկկարկուրով մոմներով հանձնում են քահանային, ով մեծ երկուդաժութեամբ իսկկարկում է եւ վերցնելով ընծաները՝ դնում ս. Սեղանին: Ապա պատարագիչը, քոջը քարծրացնելով, նախ իսկկարկում է սկիից, ապա մատները վանում գրեթէ նույն իմաստով, ինչպէս ձեռքերի առաջին վազման ժամանակ:

Այս պահին սբ Սեղանին սպասարկող սարկավազներն էլ պիտի հանեն իրենց ավելորդ զարդերը եւ վզնոցները: Սկսվում է սարկավազական քարոզը, ուր հորդորվում է ժողովրդին, որ երկուդաժութեամբ, խղճի մտքը, կատարյալ հավատքով աղոթեն սբ Սեղանի առաջ: Սարկավազ-



ների քարոզից հետո պատարագի քահանան դեռ չարքագործված նշխարն ու գինին ընծայում է Աստծուն՝ ասելով. «**Ընկալ առ ի մենք զառաջարկութիւնս զայս, եւ աւարտեա զսա ի խորհրդակալութիւն Մարմնոյ եւ Արեան Միածնի քոյ, դէղ թողութեան մեղաց պարգենեա ճաշկողացս զհաց զայս եւ զքածակս**»:

Սրբագործության պատարասության մի մասն է «**Ողջունք**», որն ազգարարում է սարկավազի քարոզը. թէ՛ «**Մի խղճիս եւ գայթակղութեամբ**» կանգնեց Աստծու Սեղանի առաջ, այլ՝ «**ուղիղ վարուք, պարզ մտօք, միմիտ սրտիս, կատարեալ հաւատով, լցեալ սիրով**» եւ այլն: «**Ողջունք**»-ը սովորեցնում է նաեւ մեզ, թէ մեր վարքը պետք է ուղիղ լինի: Դրա պատճառը Երիստոսի՝ մեր մեջ հայտնվելն է եւ նրա՝ մեզ անչափ սիրելը, որի համար էլ Նա, Աստված լինելով, խոնարհվեց, մեր մեջ բազմեց եւ մեզ իրավունք տվեց իրեն պաշտելու եւ երկնային սերովքների նման իրեն սրբաբանելու:

Ապա սարկավազի կրկին ազգարարությամբ՝ կամաց-կամաց մոտենում ենք Պատարագի ամենակիրակյան մասին, որը մենք կոչում ենք **Սրբագործութիւն**, իսկ հույներն ասում են **անաֆորա** կամ **պոռոֆորա**, որը նշանակում է սուկ Պատարագ:

Շարունակելի

Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչներ խորհրդակցությունն Նուսաստանում

Հոկտեմբերի 11-ից 17-ը Զուսաստանի Կոս կղզում տեղի ունեցավ Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչների նախապատրաստական խորհրդակցություն՝ համանախագահությանը Սափամայի մետրոպոլիտ Գենակիոսի (Տիգրեզական պատրիարքություն) եւ Միջագետքի մետրոպոլիտ Եվստաթիոս Մաթթա Բոհամի (Ասորի Ուղղափառ եկեղեցի), ընդհանրապէս եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համաժողովի, որը տեղի է ունենալու 2013 թ. հոկտեմբերի 30-ից Նուսաստանի 9-ը Զարուբանի Կորնայի Բուսան քաղաքում:

Խորհրդակցության 37 մասնակից՝ մետրոպոլիտներ, արքեպիսկոպոսներ եւ եպիսկոպոսներ, վարդապետներ եւ քահանաներ, ինչպէս նաեւ աշխարհիկ աստվածաբաններ Ուղղափառ եւ Արեւելյան Ուղղափառ եկեղեցիներից, հյուրընկալվել էր Կոստանտնուպոլիսի Տիգրեզական պատրիարքության Կոսի եւ Նիսիոսի մետրոպոլիտության կողմից:

Խորհրդակցության ընթացքում լսվեցին բանախոսու-

թյուններ՝ եկեղեցու հաղորդութեան կազմակերպության, խաղաղության եւ մարդու իրավունքների, բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության եւ այլ թեմաներով, ինչպէս նաեւ քննարկվեցին եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համաժողովին առկա մի շարք կազմակերպչական հարցեր:

Հոկտեմբերի 13-ին ժողովականները նաեւ աղոթք բարձրացրին առ Աստծով՝ Երուսաղեմի հայոց Թորգոմ պատրիարքի հոգու հանգստության համար:

Ժողովականները մասնակցեցին նաեւ Կոսի Սբ Լիկողայոս տաճարում մատուցված Պատարագին, այցելեցին եկեղեցական ծխեր եւ հանդիպումներ ունեցան համապատասխանների հետ:

Խորհրդակցությանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մասնակցում էր միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրէն Զովակիմ եպս Սանուկյանը, իսկ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսությունից՝ տիկին Սարիք Եսթեյանը:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՆԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 6

Օծման արարողությանն առաջնակին նշանակություն է հաղորդում մեծապատիվ հյուրերի ներկայությունը, որոնց թվում՝ Թիֆլիսի Նահանգապետը, փոխնահանգապետը, քաղաքապետ Իշխան Ն. Երկայնաբազուկ-Արդուլյանը, Թիֆլիսի ոստիկանապետը, բանտային հանձնաժողովի հայ եւ օտարազգի պատվավոր անդամներ:

Եկեղեցու ծծման առիթով երկու օր շարունակ եկեղեցու դռներ բաց են մնում նաեւ Թիֆլիսի հայ ուխտավորների համար, արտոնություն, որ շարունակվում է եւս մի քանի տարի:

1895 թվականին արդեն թիֆլիսահայ «Արձազանք»-ը բանտային եկեղեցու մասին գրում է, որ Գրիգորիս քահանա Մատիլյանցի ընտրվել «այժմ եկեղեցի մի ուշադիր պատկեր է ներկայացնում թէ իր մաքրութեամբ, թէ համապաշտած դաստիարակեամբ եւ թէ եկեղեցական զարդերով»:

1909 թվականին այստեղ հիմնվում է նաեւ դպրոց՝ անուանում հայ բանտարկյալների գրագիտություն սովորեցնելու համար:

Ուշագրավ է նաեւ հայ կալանավորներից կազմված եկեղեցական երգչախմբի մասին տեղեկությունը: 1909 թվականի հունիսին Մետեխի բանտ է այցելում Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Իզմիրլյանը: Եվ, ինչպէս գրում է «Հովվի» թերթը, «բանտի սրահի առաջին յարկից սկսուեց «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» շարականը, որ երգեց հայ բանտարկյալներից բաղկացած խումբը եւ մեծ տպավորություն արաւ ամենի վրայ»: Զանդուկյան ավարտվում է «Զայր մեր»-ի երգեցողությամբ, որ կրկին կատարում է կալանավորներից կազմված երգչախմբը:

20-րդ դարի սկզբներին արդեն որոշակի ավանդույթներ ձեռնարկած հայոց բանտային եկեղեցիները դարձրեցին գործելու խորհրդային կարգերի հաստատումից հետո: Աստծու խոսքը հայ կալանավորներին հասցնելու հնարավորություն հայ հոգեւորականին կրկին տրվեց նորանկախ Հայաստանում: Այսօր հոգեւորականի բանտային ծառայությունն ամրագրված է օրենքով: 2007 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ



Մետեխ. գործ՝ Գ. Գրիգորյանի (Չոտոտ)

Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքով Հայ եկեղեցուն իրավունք է վերապահված, ի թիվս այլ հաստատությունների, մշտական հոգեւոր ներկայացուցիչ ունենալու նաեւ ազատագրված մաս վայրերում, ներառյալ՝ քննչական մեկուսարաններում:

ՀՀ ազատագրված վայրերում կառուցվել եւ կառուցվում են նաեւ բանտային եկեղեցիներ: Եվ թերեւս արժէ, որ նորակառույց այդ եկեղեցիներից մեկը հիշեցնի բանտային առաջին հայ հոգեւորականների անունները՝ սբ Սիմոն կամ սբ Գրիգորիս:

Հեղինե ՄԿՐՅԱՆ

ՈՒՐ ԵՍ ԱՆՀԵՏԱՑԵԼ, ԲԱՐԻ՝ ԵՎ ԱՐԴԱՐ ՄԱՐԴ

Սկզբը՝ էջ 5

Այդ իսկ պատճառով Հիսուս Զրիստոսը, անդրադառնալով փոխառվածությանը, ասում է. «Փոխ տվեք նրան, ումից ետ ստանալու ակնկալիք չունեք» (Ղուկ. 23:35): Զրիստոսությունը մարդկանց քարոզում է հավասարություն՝ ազգաբարեկամ Պողոս առաքյալի անունով խոսելով. «Զեր առատությունը թող լցնի չքավորի պակասությունը, որպեսզի երկու կողմում էլ հավասարություն լինի» (հմմտ. Բ Կորնթ. Ը 14): Տիրոջ արդար դատաստանին ենթակա են թե՛ հարուստները, թե՛ աղքատները: Բոլոր ժամանակներում մեծահարուստի միտքն զբաղեցնում է հետեւյալը. «Եթե բաժանեմ ունեցածս ավելորդ մասը, ապա կարիքավորներին, կաղքատներին ու կենսական»՝ առանց ակնաչափի լինելու մարգարեին, որ ասում է. «Չտեսա արդարին արհամարհված եւ ոչ էլ նրա զավակին՝ հաց մուրախիս» (Սաղմ. ԼԶ 25): Այս իսկ պատճառով է, որ մեր Տերն այդի կնոջ օրինակով փորձում է դաստիարակել մարդուն՝ ուղղորդելով դեպի ողորմության եւ աղքատասիրության՝ մեծ ու փրկական խորհուրդը:



Մարդուն կործանման տանող մեղքերից մեկն էլ կախարհությունը ու հմայությունը գրավելն է:

Իմաստունը գրում է. «Ղուս տեցիր նաեւ Քո սուրբ երկրի ինքնակիչներին՝ իրենց կատարած գարշելի գործերի, կախարհությունների եւ անսուրբ ընծաների համար» (Իմաստ. ԺԲ 3-4): Կախարհությունն ու հմայու-

թյունն առելի են Աստծուն, որովհետեւ դրանք չարի գործերն են: Հուսահատ մարդը, կարիքից դրդված, դիմում է կա՛մ կախարհներին, կա՛մ փուկներին, կա՛մ էլ խաբեաներին՝ կարծելով, թե նրանք կարող են իրեն այդ փոճակից դուրս բերել, այնինչ խաբվելով եւ կախարհվելով՝ ընկնում է դեւերի ցանցը: Այդ դիվային ուժերը մտնում են մարդու ներաշխարհ, եւ մարդը, ինչպես գրում է Մանդակունի հայրապետը, «սկսում է հորանջել. ձախ կողմում կախարհում է, աջ կողմում՝ փեփքում, անարգուն է խաչը, թշնամաբար անարգուն է Զրիստոսին եւ չի հասկանում», այսինքն՝ հայտնվում է հափշտակության մեջ: Մի արդարամիտ մարդ գրում է. «Ով գրկում եւ ուրիշների ունեցվածքը հափշտակում է, իր ունեց-

վածքը ծառանգելու իրավունքը կորցնում է, ուստի, ով ցանկանում է իր ունեցվածքը խաղաղությամբ վայելել, թող հատուցի նրան, ում գրկեց: Որովհետեւ ով գրկանքով ուրիշների ունեցվածքն է ծողովում, ասես իր հագուստի մեջ կրակ է ծրարում»:

Դիմելով կախարհներին՝ մարդը դաշինք է կնքում սատանայի եւ նրա չար ուժերի՝ դեւերի հետ: Եվ այս ամենը հիմնականում վախի, հիվանդության, աշխարհայտության եւ այլնի պատճառով: Արդյունքում՝ «կախարհությունները միայն նեղություն ու ցավով են բերում» (Ա. Թագ. ԺԵ 23): Այս պահին մեզ օգնելու է գալիս Հակոբոս առաքյալը՝ ասելով. «Հիվանդ է ձեզանց մեղք, թող կանչի եկեղեցու երեցներին, եւ նրանք նրա վրա թող աղոթք անեն, թող յուզով օծեն նրան Տիրոջ անունով: Եվ հավատով արված աղոթքը կփրկի հիվանդին» (Հակ. Ե 14-15): Աստված պատվիրում է. «Վուկներին մի՛ հետեւեք եւ ոգեհանների հետ մի՛ առնե՛լեք, որպեսզի նրանցով չաղծվեք» (Ղեւտ. ԺԹ 31): Իսկ եկեղեցին անդադար կրկնում է Պողոս առաքյալի խոսքը. «... անխտիր սուտ աստվածներին ու կախարհներին եւ հետեւում, այդ պատճառով էլ ձեր մեջ շատ հիվանդներ ու ցավազարներ կան, նույն պատճառով էլ շատերը տարածվում են» (հմմտ. Ա. Կորնթ. ԺԱ 30):

Ս. Գրքի համաձայն՝ մարդն ստեղծվել է Աստծու պատկերով եւ նմանությամբ (հմմտ. Մկնկ. Ա 26): Մեկ այլ տեղ կարդում ենք՝ Աստված մարդուն ստեղծեց հողից եւ նրա դեմքին կենդանության շունչ փչեց (հմմտ. Մկնկ. Բ 7): Այստեղից էլ ի հայտ է գալիս մեկ ճշմարտություն՝ մարդ արարածը մարմնեղեն է, քանի որ հողից է, եւ հոգեղեն է՝ քանզի Աստծուց է: Մարմինը հողից է հավասարվում, իսկ հոգին, բարձրանալով երկինք, միավորվում է Աստծու հետ: Բայց ինչպես հողի մեջ, Տիրոջ խոսքի համաձայն, մեռնում է ջրոնքի հատիկը եւ հետո բազում արդյունք տալիս, այնպես էլ մարդը մեռնելով հողին է հավասարվում, ապա հառնելով ծովվում է Աստծու հետ: Փորձություններով ի աշխարհում մարդը գտնվում է իշխանության ներքո: Այո՛, Տիրոջ խոսքի համաձայն՝ մարդը հնազանդվում է իր տիրոջը, բայց եւ տերերին էլ կործանելու չի վերապահվում սեփական հաճույքների հազուդրդ

Երանսի՝ այն մարդուն, ով ապրում է արդարության եւ սիրո մեջ:

Անդրանիկ Կրկ. ԶԻՎԱՆԵՍՅԱՆ

Օժվեց Աղավաատուն գյուղի Նորակառույց եկեղեցին



Հոկտեմբերի 21-ին Արմավիրի մարզի Աղավաատուն գյուղում, ծեռամբ Արմավիր թեմի առաջնորդ Սիոն եպս Աղավաատի եւ մասնակցությամբ Արմավիրի թեմի հոգեւոր դասի, կատարվեց Նորակառույց Արմավիր եկեղեցու օծման արարողությունը:

Եկեղեցու օծմանը ներկա էին 33 վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղափարյանը, եկեղեցու բարերար մոսկվաբնակ Վահան Ավագյանը՝ իր ընտանիքի հետ, Ազգային ժողովի պատգամավորներ, համայնքապետ Աշոտ Գրիգորյանը,

հարակից համայնքների ղեկավարներ, բազմաթիվ համագործակցողներ, թեմի եկեղեցատեր երիտասարդաց միությունների անդամներ եւ բազմաթիվ ուխտավորներ:

Սրբազան հայրն օծեց սբ Մեղանը, սբ Կոստանի սյուները եւ Սկրտության ավազանը:

Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով բարերար Վահան Ավագյանն արժանացավ Հայ Առաքելական Սբ Եկեղեցու «Ար Գրիգոր Լուսավորիչ» պատվով շքանշանի:

Առաջնորդարան
Արմավիրի թեմի

Վերածվեց Չկալով գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին

Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի Չկալով գյուղի 1862 թ. վերակառուցված Սբ Աստվածածին եկեղեցին, որը ժամանակի եւ բնական ազդեցությունների հետեւանքով ֆիզիկապես մաշվել է քայքայվել էր:

Արձագանքելով գյուղի բնակչության խնդրանքին՝ եկեղեցու փլուզումը կանխելու եւ սրբազան արարողություններ կատարելու նպատակով, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Չուլջյանի օրհնությամբ, Աժ պատգամավոր Կարեն Սարիբեկյանն անձամբ նախաձեռնեց եկեղեցու վերակառուցման հովանավորություն ու ղեկավարեց աշխատանքները: Հիմնովին փոխվեց ծածկը, ամրակալվեցին հիմնապատերը, կառուցվեցին խորանն ու սբ Մեղանը, կատարվեցին տարածքի հսկայածավալ մաքրման աշխատանքներ, սալապատվեց, պարսպապատվեց եկեղեցու եւ դպրոցի շրջապատը, եկեղեցուն կից վերակառուցվեց հովվատուն, իսկ քանդակագործ շքեղ դուռն առանձնահատուկ տեսք հաղորդեց եկեղեցուն: Իրականացվեցին ներքին հարդարման, կահավորման եւ տարածքի բարեկարգման աշխատանքները:

Հոկտեմբերի 4-ին, ծեռամբ թեմակալ առաջնորդի, օժվեց եւ տանիքին տեղադրվեց եկեղեցու բարձրադիր խաչը:

Իսկ առաջ հոկտեմբերի 20-ին, ծեռամբ թեմակալ առաջնորդի, կատարվեց Սբ Աստվածածին եկեղեցու վերածման արարողությունը:

Արարողությանը ներկա էին Լոռու փոխմարզպետը, պատգամավորներ, Կարեն Սարիբեկյանի ղեկավար ընկերները, հյուրեր երեսնից, բազմաթիվ ուխտավորներ, Չկալովի գյուղացիներ, համայնքապետներ, գյուղի դպրոցի ուսուցչական կազմը, աշակերտներ, հավատացյալներ: Արարո-

ղության ավարտին սրբազան հայրն օրհնեց բարերար Կարեն Սարիբեկյանին, գյուղի բնակիչներին եւ բոլոր ներկաներին՝ շնորհավորելով արթաթավայրի վերածման առիթով, եւ օրհնության գիր հանձնեց բարերարին, Նվիրեց մեր Տիրոջ պայծառակերպության խորհուրդը պատկերոր մանրանկար:

Սրբազան հայրը շնորհակալական խոսք ասաց նաեւ եկեղեցուն սրբապատկերներ եւ գորգեր նվիրաբերած Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանին, Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանին, մարզի ոստիկանապետ Անուշահ Դամբարյանին, փոխմարզպետ Արսեն Դարբինյանին, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Արմեն Ջաւազյանին ու կրթության վարչության պետ Մուսա Սայադյանին:

Դիվան Գուգարաց թեմի

ԵՐԽՍՏՈՆՅԱ ՔԱՅԱՍԱՏԱՆ

Կրոնական, մշակութային, քաղաքական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Զրիստոսյան Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստուրիկ Ստամբուլյան

Գրաքննության վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197
Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am
web կայք՝ kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 1.11.2012 թ.
Տպագրանակ՝ 2100
Գինը՝ 50 դրամ